

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՄԻ ԿԻՐԱԿԻՆ

(3 մարտի 2002 թ.)

*«Եվ ես ձեզ ասում եմ, անհրաժեշտ է մասնակցել ձեզ համար
բարեկամների արեք, որպեսզի երբ այն պակասի,
հավիտենական հարկերի փակ ընդունեն ձեզ:
Չեք կարող և՛ Աստուծոն ծառայել, և՛ մասնակցին»:
(Ղուկաս ԺԶ 9, 13)*

Նոգևոր եղբայրներ և պարվարժան հայրերիք,

Վստահ եմ, որ բոլորդ էլ գիտեք, թե այս կիրակին մեզ դարձյալ հրավիրում է ապաշխարողական կյանքի, Ղուկասու Ավետարանում պարմվող Տնտեմի առակի խորհրդով, որի համար Մեծի Պահոց այս կիրակին կոչվում է նաև Տնտեմի կիրակի:

Առաջում ասվում է, որ մեծահարուստ մի մարդ մի փոքր ունեւոր, որի մասին զանգարներ են հասնում իր ականջին, թե կշարաշահեր իր պաշտոնը: Մեծապատիւ կկանչն իր փոքրեւորն և կիրահանգե, որ հաշիվ փա: Նանգավոր լինելով զգալով, փոքրեւոր փազնապի կմարմնի և ինքն իրեն հարց կտա՝ «Ի՞նչ պիտի անեմ, երբ փոքրեւոր պաշտոնիցս զրկվեմ: Ո՛չ արհեստ գիտեմ, ո՛չ էլ մի բան եմ խնայել հետագա կյանքիս համար»: Բայց ճարպիկ և հնարամիտ անձ լինելով, ասում է՝ «Գիտեմ, ի՞նչ պիտի անեմ»: Անմիջապես գնում է և կանչում իր փոքր զարգացաններին և հարցնում.

- Ի՞նչ ես պարտք իմ փոքրեւոր:

Երբ նա պարտասխանում է՝ հարյուր փակառ ձեթ, հրահանգում է, որ պարտամորհակ պարտաստեն և գրեն հիսուն, իսկ 100 պարկ պարտք ունեցողի պարտքը դարձնում է 80:

Անկասկած այս բոլորն էլ հասնում է մեծահարուստի ականջին. այդպես են այս աշխարհի փոքրերը, թույլ ջեն փալիս, որ իրենց սրացվածների և կալվածքների մեջ որևէ բան կարարվի առանց իրենց գիտության: Առաջն ասում է, թե փոքր որքան զարգացավ, նույնքան էլ համակրանքով վերաբերվեց փոքրեւոր արածին, որովհետև «իմաստութեամբ արար»: Շահեց պարտասխանների համակրանքը՝ հուսալով, որ ներդրւյան օրերին նրանք էլ բարյացակամութեամբ կվերաբերվեն իրեն:

Առակի վերջում Տիտուս երկու կարևոր և հարակ պարվերներ է փալիս հավաքվածներին.

Առաջին՝ անիրավ մամոնան (մամոնան միշտ էլ անիրավ է) այնպես օգտագործեցեք, որ բարեկամներ շահեք, որպեսզի երբ այն ձեզ պակասի՝ դուք կարողանաք հավիրենական հարկերու փակ ընդունվել:

Երկրորդ՝ չեք կարող թե՛ Տեր Աստծուն և թե՛ մամոնային միաժամանակ ծառայել:

Սիրելիք, մեր Փրկչի պատմած առակները հեքիաթներ չեն, որոնց կարելի է մի պահ ականջ դնել, փայլվորվել, բարոյական մի դաս առնել և վերջ: Դրանք մեզ լինելու կամ չլինելու, փրկվելու կամ կորստյան դարապարովելու ճանապարհը ցույց տալու և կոչված պարզամտներ են: Ըստ Ս. Գրքի մասնագետներու, Փրկիչ ինք չէր հորինել այս պարմությունները, այլ կբաղեր իր օրերում պարահաճ դեպքերից, որոնք այսպիսով կյանքից վերցված օրինակներ էին:

Կարևորը, սակայն, առակը ճիշտ մեկնաբանելն է: Պետք է ընդունել, որ, իրավամբ, դժվար է այս առակին ճիշտ մեկնաբանություն տալ: Վերջիվերջո գործ ունենք մի խարդախ և ստախոս անձի հետ, որ իր փիրոջն է խաբում և չարաշահում, իսկ րեբը փոխանակ նրան սաստելու և պարծելու՝ գովում է:

Մամոնան ոչ միայն **փող-դրամ** հասկացությունն է, այլ նաև ընդգրկում է նյութական այն բոլոր բարիքները, որոնցով մենք կարողանում ենք լավ կյանք ապահովել: Սուրբ Գրքի կարգ մը մեկնաբաններ այս առակի իմաստը խորացնում են բարոյական այն հորդորի մեջ, համաձայն որի մենք պարտավոր ենք մեր նյութական բարիքները օգտագործել այնպես, որ շահենք մարդկանց բարեկամությունը, որպեսզի նրանք մեզ օգնեն մեր դժվարին օրերին: Ուրիշներ ենթադրում են, որ մեր Տիրոջ մեզ փոխանցած ճշմարտությունն այն է, թե մենք ոչ թե **տնտեսներ** ենք, այլ՝ **ժամանակավոր տնտեսներ**: Մեր կյանքը, մեր նյութական գոյությունը և բարիքները րեբ ունեն, մերը չեն: Մենք նրանց ժամանակավոր պարասխանատուներն ենք, նրանց համար հաշիվ պիտի տանք, երբ զանոնք վերադարձնենք մեր Տիրոջը կամ նրանք մեզանից պահանջվեն Տիրոջ կողմից հարմար նկատված ժամանակին:

Ըստ մեզ, սակայն, Փրկիչն ավելի կարևոր մի հարցադրում է կատարում. ի՞նչ պիտի պատահի, երբ մամոնան մեզ պակասի: Ի՞նչ պիտի անենք մենք, երբ նյութական աշխարհը, նրա բարիքները մեզ պակասեն:

Կկարծե՞ք՝ պարզ հռեթորական հա՛րց է սա. մամոնան չի՞ պակասում: Ոչ միայն մեզ մոտ, Նայաստանում, այլև ամբողջ աշխարհում մամոնան միշտ պակասում է: Բոլոր պարերագմները, աշխարհի մեջ ծագած բոլոր դժվարություններն ու փազնաւները մամոնայի մսխվածության կամ պակասության արդյունք են: Երբ մեր հույսը դրել ենք նրա վրա, ի՛նչպես պիտի կարողանանք բարեկամներ շահել, կամ մեզ համար հավիտենական հարկեր ապահովել:

Տեսեք, երբ մոռանում ենք մեր **ժամանակավոր** տնտեսներ լինելու իրողությունը, երբ անտեսում ենք **հաշվելու** լինելու մեր պարտաստականությունը, ի՛նչ ճակատագրական սխալներ ենք գործում: Ոչ միայն մեր սեփական կորստյան, այլև միլիոնավոր ուրիշ մարդկանց ճակատագրի հետ ենք խաղում: Ի՛նչ պիտի անեն այն մարդիկ, ովքեր մամոնա չունեն: Ի՛նչ պիտի անենք մենք, երբ մամոնան պակասի

մեզ: Մեր տերերի բարեկամությունը շահելու կարողությունից պիտի զրկվենք: Հավիտենական հարկերի ներքո ընդունվելու պարտություն պիտի չընծայվի՝ մեզի:

Բայց չէ՞ որ մամոնան միշտ պակասում է և պիտի պակասի: Ե՞րբ են հարուստները հազեցում, որ աղքատները մի օր կարողանան հազենալ: Տակավին կա ավելի ահավոր այն պահը, երբ մահվան օրը մեր ունեցած և՛ նյութական կյանքը, և՛ ամբողջ մամոնան մեզանից պիտի առնվեն և վերացվեն: Մեր Տիրոջ առաջ պիտի հայտնվենք մերկ և մեր ձեռքում նյութական ոչինչ պիտի չունենանք մենք մեզ արդարացնելու: Նյութապաշտ կյանքի ահավոր վախճանի մասին այս հարազատ պարկերը մեզ ուսուցանում է ուշադիր լինելու մեր Փրկչի փված հետևյալ ազդարարությանը.

- Մարդիկ, լինելով ժամանակավոր տնտեսներ, իրավունք չունեն և չեն փրկվի միայն ժամանակավոր բարեկամություններ ամրապնդելով և նյութական կարիքների գոհացման միջոցներ ապահովելով: Դրանք ժամանակավոր հարկեր են, որոնցից ամեն վայրկյան դուրս վարավելու վրանգին ենթակա ենք: Պաշտոնից հեռացվելու վրանգը և անապահովությունը նույնքան իրական են, որքան մեր պաշտոններն ու մեր ժամանակավոր տնտեսի հետ մեր բարեկամությունը: Պարծառը մեկն է. մարդիկ սխալական են, անվստահելի, նույնքան խաբեբա՝ որքան հավատարիմ, այնքան բարի՝ որքան չար, որչափ արտադրող՝ նույնքան և մսխող: Չի կարելի միայն մամոնային ծառայելով ապահովություն գտնել, որովհետև մամոնան միշտ պիտի պակասի: Իսկ մամոնային ծառայելով՝ արդեն ծառայում ենք ժամանակավոր տերերին և մոռանում մեր կյանքի իսկական հավատարիմ, մշտադարձ և ճշմարտապես սիրող իսկական Տիրոջը՝ Աստծուն: Մենք մեզ խաբում ենք, երբ ասում ենք, թե այս աշխարհում գտնված ժամանակամիջոցում պետք է ծառայել մամոնային, իսկ անդենականի մեջ Աստծո հետ մի կերպ լեզու կգտնենք: Կարելի է երկու փրոջ ծառայել: Մամոնան մեզ գերում է, ստրկացնում և չի թողնում, որ մենք մերձենանք, հնազանդվենք և ծառայենք մեզ ազատագրող, փրկող և հավիտենական հարկեր մեզ համար պարտադրող Աստծուն:

Չի կարելի ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային:

Իրապես, որքան դժվար է հասկանալ և մեկնաբանել այս առակի տարողությունը և իմաստը: Առանց մեր կյանքի հավիտենական տարողության ընկալման և չափանիշներին՝ որքան՝ շուրջ և որքան՝ շարք ենք սխալվում և շփոթվում: Բայց մեր Եկեղեցու Հայրերը, տեսե՛ք, մեզ օգնում են, որ ուղիղ ընկալենք աստվածաշնչական դասերը: Այսօրվա մեր աղոթքների և շարականների մեջ ի՞նչ ներշնչիչ և իմաստուն հորդորների ենք հանդիպում: Պիտի փափագեի, որ բոլորիս ուշադրությունը մի պահ կենտրոնանա շարականի հետևյալ տողերի վրա. «Որ շինեցեր բարձրագույն զեկեղեցի թո խորհրդեամբ եւ ի սմա կարգեալ տնտես զքարոզ բանին ճշմարտութեան, օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ»:

Աշխարհի և տիեզերքի ճարտարապետն իր ստեղծագործության ծրագրի մեջ միայն նյութական, տեսանելի այս աշխարհը չէ, որ արարել է. կա ավելի մեծ և հզոր ճարտարապետական ոգեղեն կառույց, որ Եկեղեցին է՝ Աստծո խորհրդական Մարմինն այս աշխարհի և տիեզերքի մեջ Իր ներկայությունն իրականացնող և ամրապն-

դող մի Աստվածամարդկային հաստատություն, որ մեր ուշադրությունը սևեռում է մարդու և մարդկային կյանքի հավիտենական չափանիշների և արժեքների վրա:

Այս առակը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար մի շարք կարևոր բառի վրա պետք է սևեռենք մեր ուշադրությունը՝ **յավիտենական յարկեր**: Մարդը հավիտենական արժեք է, մեր կյանքը հավիտենությանն է սահմանված: Ճիշտ է, այս աշխարհում մենք ապրում ենք ժամանակի մեջ և ժամանակավոր, անցողական արժեքներով ու խնդիրներով ենք զբաղվում, բայց մեր փունը և հանգիստը մենք զբոսնում ենք հավիտենական հարկերի փակ և հավիտենական արժեքների մեջ: Խաբվեցի՞նք և փարվեցի՞նք ժամանակավոր և խաբուսիկ երևույթներով կամ վարձավարությամբ, այն ժամանակ կդառնանք անիրավ փոփոխներ և կորստյան կմապնդվենք: Իսկ եթե հավատարիմ մնացինք մեր հավիտենության փենչին և առավել կյանքին. այդ ժամանակ է, որ կդառնանք բարի ծառա, ազնիվ և հավատարիմ: Փոքրը բաների մեջ հավատարիմ մնալով Աստծուն, արժանի կլինենք ավելի մեծ վարձավարության:

Մեծի Պառհոց այս օրերին, երբ բոլորս գիտակցական ճիգով փորձում ենք ավելի մերձենալ Աստծուն և Աստվածայինին, իմ աղոթքն ու մաղթանքն է, որ մենք հեծա՝ մուտք գլխենք միայն ու միայն նյութական և մամոնայի մեզ տված ժամանակավոր և խաբուսիկ ապահովություններին ու ժամանակավոր ապավեններին: Փնտրենք նաև հոգևոր սխրանքը, բարոյական հզորությունն ու փոփոխությունը: Իրավամբ, քանի որ մարդն Աստծո համար հավիտենական արժեք է, Աստված վարձավարել է նրան հավիտենական կյանքով, ուստի չգոհանանք այն փոքրով և փոքրոգի չափանիշներով, որոնց միջոցով նյութապաշտ, ընչաքաղց և աշխարհիկ կենցաղը մեզ կաշկանդում ու պարտավորեցնում է: Մենք ազատ Հայաստանի և ամեն օր մեզ ազատագրող Աստծո հարազատ զավակներն ենք: Մենք ազատ ենք ընտրելու մեր կյանքի ուղին, մենք ազատ ենք ընտրելու մեր ցանկացած չափանիշները:

- Երանի չփոթվենք, չդառնանք անիրավ փոփոխներ, մասնավորապես մեր Հայրենիքի և ժողովրդի համար ճակատագրական այս օրերին:

Դարերով մենք հավատացինք, որ Հայաստանը և Հայոց Եկեղեցին մեր ժողովրդի ամենեն ապահով և հարազատ հավիտենական հարկերն են, որոնք կոչեցինք մայր, որովհետև նրանց տված սնունդով մենք հավատացինք, որ հավիտյան կապրենք և հավիտենության համար կապրենք:

Համոզված եմ, որ այդ հավատով է, որ մենք տակավին երկար կապրենք և կկառուցենք մեր նոր կյանքը, որ բոլորիս համար Աստծուց մեզ պարգևված մեծագույն շնորհն է: